ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ 02 -Ն
24 հունվարի 2011թ.

## ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2011 Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը,հոդվածի 18-րդ կետը և «Տեղական տուրքերի և վճարների մասին » ՀՀ օրենքի 7,8,9,10,11,13 հոդվածները,

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Գեղարդ համայնքում 2011թ.համար տեղական տուրքերը և վճարները սահմանել համաձայն հավելվածի:

5 կողմ՝ Ավագանու անդամներ՝

Ա. Արևշատյան
Գ. Արզումանյան
Յու. Թառոյան
Ռ. Սարգսյան
Ն. Տոնոյան

Համայնքի ղեկավար՝ Ի. Թառոյան

*08508995*

բ) հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,
տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվել է 150 հազ.դրամ

6. «Թանկարժեքմետաղների մասին»Հայաստանի հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատաս-
խան՝համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ վաճառքի թույլատվության
համար՝50.0 հազ. դրամ
7. Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի,զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման
օբյեկտները,բաղնիքները,խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը
ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա) առևտրի օբյեկտների համար 25.0 հազ.դրամ
բ) հանրային սննդի զվզրճանքի օբյեկտների համար 50.0 հազ.դրամ
գ) բաղնիքների,սաունաների համար 200.0 հազ. դրամ
դ) խաղատների կազմակերպման համար 500.0 հազ.դրամ
ե) շահումով խաղերի կազմ. համար 250.0 հազ.դրամ
զ) վիճակախաղերի կաղմակերպման համար 100.0 հազ.դրամ

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1քմ –ի տեղական տուրքը սահմանվում է
ա) ալկոհոլային սպիրտային պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտա-
դրանք գովազդող արտաքին գովազդի համար 1.0 հազար դրամ
բ) թունդ ալկոհոլային արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար 2.5 հազ.դրամ
գ) այլ արտաքին գովազդի համար 500 դրամ
դ) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5.0 հազ. դրամ

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսի ծառայություն իրականացնելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.0 հազ.դրամ:
ա/ Համաձայն տարածքում շինարարություն կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու,ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝Կոտայքի մարզի Գեղարդ գյուղական համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց որևէ փոփոխման վճար սահմանել
անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափը
բ/ Գյուղական համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու,հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ
գ/ Մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու համար կապված ծախսերի փոխհատուցման համար՝1000 դրամ:

ԳԵՂԱՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ.ՀՈՒՆՎԱՐԻ 24_Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ 2011Թ.ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ,ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

1.Համայնքի տարածքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտա- րապետաշինական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի շինարարության թույլտվությամբ տեղական տուրքը սահմանվում է՝հիմնական օբյեկտների համար

ա) մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական/ամառանոցային/տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 10 հազար դրամ

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ.ա) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15.0 հազ. դրամ

բ.բ) 501-ից մինչև 1000 քմ ընդհանու մակերես ունեցող օբյեկտի համար 25.0 հազ.դրամ

բ.գ) 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտի համար 70.0 հազ.դրամ.ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտի համար 3.0 հազ.դրամ

դ) 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտի համար 5.0 հազ.դրամ

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ուժեղացման,վերականգնման արդիականացման,աշխատանքների համար ,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների վերնակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գոռծառնական նշանակութ-յան փոփոխություն՝ 3000 դրամ

բ) նախատեսվում է միայն կցակառույցների վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների շինարաության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում,շենքերի շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5.0 հազ.դրամ

4.Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի,իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է

ա) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար 2.500 դրամ

բ) ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝1.5 հազ.դրամ

5.Համայնքի տարածքում

ա) բացօդյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ